

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ԴՊՈ. Խորունկ, անհասկնալի եւ անըսկիզբ խորհուրդ, ո՞վ Աստուած, որ վերին թագաւորութիւնը զարդարեցիր իբրեւ հարսնարան անմատչելի լոյսին, եւ գերապանծ փառքով զարդարեցիր հրեղէններու ղասերը: *

Երկնաւոր թագաւոր, անսասան պահէ քու եկեղեցիդ եւ խաղաղութեան մէջ պահէ քու անունիդ երկրապագուները:

ՔՀՆ. Սրբուհի Աստուածածինին բարեխօսութեամբ, Տէ՛ր, ընդունէ՛ մեր աղաչանքը, եւ փրկէ՛ մեզ:

ՄՐԿ. Սուրբ Աստուածածինը եւ բոլոր սուրբերը բարեխօս դարձնենք Հօրը քով, որ երկինքն է, որպէսզի յօժարի մեզի ողորմիլ, եւ զթալով փրկէ մեզ, իր ստեղծածները: Ամենակալ Տէր, մեր Աստուածը, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

ՔՀՆ. Տէ՛ր, ընդունէ՛ մեր աղաչանքները՝ սուրբ Աստուածածինին, քու միածին Որդիիդ անարատ ծնողին բարեխօսութեամբ, եւ խնդրանքովը բոլոր սուրբերուն, եւ այսօրուան յատուկ շնորհքովը: Լսէ՛ մեզ, Տէ՛ր, եւ ողորմէ՛ մեզի: Ներէ՛, քաւէ՛ եւ թողութիւն շնորհէ մեր մեղքերուն: Արժանի ըրէ շնորհակալութեամբ փառաւորելու քեզ, Որդիիդ եւ Սուրբ Հոգիիդ հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն: Մեղանչած եմ Աստուծոյ առջեւ: Կը խոստովանիմ՝ Աստուծոյ, սրբուհի Աստուածածինին, բոլոր սուրբերուն եւ ձեր առջեւ, հայրեր եւ եղբայրներ, զործած բոլոր մեղքերս. որովհետեւ մարդկօրէն մեղանչած եմ մտածումով, խօսքով թէ գործով: Այո, մեղանչած եմ, կ'աղաչեմ ձեզի, Աստուծմէ թողութիւն խնդրեցէք ինծի համար:

* Երբ պատարագիչը եպիսկոպոս ըլլայ, դպիրները կ'երգեն.

ԴՊՐ. Հրաշափառ եւ միշտ բարեխնամող Աստուած, դուն կանխագիտութեամբ Հայաստանի փրկութիւնը սկզբնաւորելով պարբեւական մեղապարտ ազգէն լուսաւորիչ շնորհեցիր. ուստի անոր բարեխօսութեամբ, ո՞վ Փրկիչ, փրկէ մեզ այժմ եւ ահաւոր գալուստիդ ատեն:

ՔՀՆ. *Թող հզօրն Աստուած ողորմի քեզի եւ թողութիւն շնորհէ անցեալ թէ ներկայ բոլոր յանցանքներուդ, ապագայ մեղքերէն փրկէ եւ բարեգործութեան մէջ հաստատէ քեզ, եւ հանդերձեալ կեանքի հանգիստին արժանացնէ: Ամէն:

ՔՀՆ. Մարդասէրն Աստուած թող ձեզ եւս ազատէ եւ թողութիւն շնորհէ ձեր բոլոր յանցանքներուն. թող առիթ տայ՝ ապաշխարելու եւ բարիք գործելու, ♫ եւ Սուրբ Հոգիին շնորհքով ուղղէ ձեր կեանքը, ինք՝ որ հզօր է եւ ողորմած. յաւիտեան փա՛ռք իրեն: Ամէն:

ԴՊԲ. ՄԵ՛Կ ալ յիշէ Աստուծոյ անմահ Գառնուկին առջեւ:

ՔՀՆ. Պիտի յիշեմ ձեզ Աստուծոյ անմահ Որդիին առջեւ:

Սաղմոս 100

ԴՊԲ. Տիրոջ աղաղակեցէք, ամբողջ աշխարհ: Ուրախութեամբ ծառայեցէք Տիրոջ:

Ցնծութեամբ եկէք անոր ներկայութեան: Գիտցէք, թէ Տէրը ի՞նքն է Աստուածը:

Ա՛ն մեզ ստեղծեց, եւ մենք անորն ենք. իր ժողովուրդն ենք, այն հօտը՝ որ ինք կ'արածէ:

Գոհաբանութեամբ մտէք անոր տաճարը, օրհներգութեամբ մտէք անոր շրջափակէն ներս:

Շնորհակալութիւն յայտնեցէք իրեն, օրհներգեցէ՛ք իր անունը: Բարի է Տէրը, անոր սէրը յաւերժական է: Եւ բոլոր սերունդներուն կը ցուցաբերէ իր հաւատարմութիւնը:

Փա՛ռք Հօրը եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՍՐԿ. Սուրբ եկեղեցիին ապաւինելով աղաչենք Տիրոջ, որ անով մեզ ազատէ մեր մեղքերէն, եւ փրկէ իր ողորմութեամբ: Ամենակալ Տէր, մեր Աստուածը, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

* Եթէ այլ բահանայ չկայ, սարկաւագը կ'ըսէ.

ՄՐԿ. Արդ եկէ՛ք բոլորս միասին խոնարհ հոգիով, զղումնալից սրտով եւ արցունքով ծունկի գանգ մեր Տիրոջ եւ արարիչին դիմաց, որպեսզի իր բարերարութեամբ՝ մեզ զերծ պահէ իր ցասումն, մեր յանցանքներուն արժանի պատիժէն: Ամենակալ Տէր, մեր Աստուածը, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

ՔՀՆ. Այս տաճարին մէջ կանգնած, երկիւղածութեամբ կը խոնարհինք եւ կ'եր- կրպագենք աստուածակիր սուրբ խաչերուն ու լուսապայծառ այս սրբավայրին առջեւ. կ'օրհնենք եւ կը փառաւորենք քու սուրբ, հրաշալի եւ յաղթող յարութիւնդ: Եւ գոհութիւն եւ փառք կ'ընծայենք քեզի, Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Հոն սեղանիդ քով պիտի գամ, ո'վ Աստուած, դուն՝ որ զիս կ'ուրախացընես երիտասարդութեանս մէջ:

Սաղմոս 43

ՄՐԿ. Արդարութիւն ըրէ ինծի, ո'վ Աստուած, եւ իրաւունքս պաշտպանէ:

ՔՀՆ. Անհաւատ մարդոցմէ, նենգաւոր ու անիրաւ մարդոցմէ փրկէ՛ զիս:

ՄՐԿ. Դուն ես նեցուկս, ո'վ Աստուած, ինչո՞ւ համար զիս կ'անտեսես, ինչո՞ւ համար տրտում ըլլամ երբ թշնամիս կը նեղէ զիս:

ՔՀՆ. Տէ՛ր, լոյսդ եւ ճշմարտութիւնդ դրկէ, որպէսզի զիս առաջնորդեն եւ հանեն քու սուրբ լեռդ, տաճարդ՝ ուր կը բնակիս:

ՄՐԿ. Հոն սեղանիդ քով պիտի գամ, ո'վ Աստուած, դուն՝ որ զիս կ'ուրախացնես երիտասարդութեանս մէջ:

ՔՀՆ. Եւ քնարով պիտի զովերգեմ քեզ, ո'վ Աստուած, իմ Աստուածս:

ՄՐԿ. Հետեւարար, ինչո՞ւ տիրիմ, եւ կամ ինչո՞ւ խռովիմ. Աստուծո՛յ պիտի յուսամ եւ վերստին զովերգեմ զայն, ըսելով.- «Փրկիչս ես դուն, իմ Աստուածս ես»:

ՔՀՆ. Փա՛ռք Հօրը եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին:

ՄՐԿ. Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Տիրոջմէ խաղաղութիւն աղերսենք դարձեալ: Օրհնենք ամենակալ Աստուածը, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հայրը, որ մեզ արժանի ըրաւ

փառաբանութեան այս վայրը գալու եւ հոգեւոր այս երգերը երգելու։
Ամենակալ Տէր, մեր Աստուածը, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի։

ՔՀՆ. Այս սուրբ յարկին մէջ, եւ փառաբանութեան այս վայրին մէջ, որ
հրեշտակներու բնակարան է եւ մարդոց՝ քաւութեան վայր,
երկիւղաձութեամբ կը խոնարհինք եւ կ'երկրպագենք աստուածակիր
սուրբ խաչերուն եւ լուսապայծառ այս սուրբ սեղանին առջեւ. կ'օրհնենք
եւ կը փառաւորենք քու սուրբ, հրաշալի եւ յաղթող յարութիւնդ, եւ
երկնային զօրքերուն հետ միասին օրհնութիւն եւ փառք կ'ընծայենք քեզի՝
Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից։ Ամէն։

ՆՈՏԻ

Երբ պատարագիչը եպիսկոպոս է, դպիրները կ'երգեն.

Աստուծմէ ընտրուած, ո'վ երանելի սուրբ քահանայ. դուն՝ նմանը
Ահարոնին եւ Մովսէս մարգարէին։ Անոր՝ որ յօրինողն էր այն
զգեստներուն, որ Ահարոն միշտ կը հազնէր եւ որ կը բաղկանար չորս
նիւթերէ՝ կարմիր, կապուտակ եւ ծիրանեգոյն բուրդէ եւ բեհեզէ։

ՄԵՂԵԴԻ Յարութեան

Յարուցեալ անմահին գերեզմանին մօտ, երկնային հրեշտակը այսօր կը
զոչէ. Քրիստոս յարեաւ, Քրիստոս ելաւ՝ կոյս գերեզմանէն, լոյս
գերեզմանէն։
Պահակները ահարեկ զարհուրեցան, որովհետեւ նորափոր տապանէն
Քրիստոս յարեաւ, Քրիստոս ելաւ՝ կոյս գերեզմանէն, լոյս գերեզմանէն։

(Այլ մեղեղներ տես էջ 38)

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻ

**ՃԱՇՈՒ ՊԱՇՏՈՆ
ԹԱՓՈՐ
ԽՆԿԱՐԿՈւթեան Շարական**

**ԴՊԲ. Կոյս մօրդ բարեխօսութեամբ՝ ընդունէ՝ քեզի ծառայողներուս
աղաչանքը, ո՞վ Քրիստոս, դուն՝ որ երկինքէն աւելի գերազանց կերպով
պայծառացուցիր սուրբ եկեղեցին քու արիւնովդ, եւ երկնային
հրեշտակներուն օրինակով, անոր մէջ կարգեցիր առաքեալներու,
մարգարէներու եւ սուրբ վարդապետներու դասերը:**

**Այսօր բոլոր քահանաներս եւ սարկաւագներս, դպիրներս եւ
ժառանգաւորներս հաւաքուած՝ խունկ կը մատուցանենք քեզի, ո՞վ Տէր,
ճիշդ անցեալին՝ Զաքարիային օրինակով: Ընդունէ՝ մեր խնկանուէր
աղօթքները, ինչպէս ընդունեցիր Արելին, Նոյին եւ Աբրահամին ընծայած
զոհերը: Վերին զօրքերուդ բարեխօսութեամբ՝ միշտ անսասան պահէ
Հայոց Աթոռը:**

(Այլ շարականներ տես էջ 38-48)

ՄՐԿ. Օրհնէ՛, տէ՛ր:

**ՔՀՆ. Օրհնեալ ըլլայ Հօրը եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին թագաւորութիւնը,
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտե-նից: Ամէն:**

**ԺԱՄԱՄՈՒՏ
Կիրակի Օրերուն**

**ԴՊԲ. Միածին Որդի, Բան Աստուած, անմա՛հ իութիւն, որ յանձն առիր
մարմնանալ սրբուհի Աստուածածինէն, միշտ կոյսէն: Դուն՝
անփոփոխելիդ՝ մարդանալով խաչուեցար, ո՞վ Քրիստոս, մեր Աստուածը,
եւ մահովդ մահը նուաճեցիր: Դուն՝ Սուրբ Երրորդութեան
անձնաւորութիւններէն մէկը, փառաւորակիցը Հօրը եւ Հոգիին, փրկէ՛
մեզ:**

(Այլ ժամամուտներ տես էջ 40-41)

ՍՐԿ. Տիրոջմէ խաղաղութիւն աղերսենք դարձեալ: Հնդունէ՛, Տէ՛ր, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի: Օրհնէ՛, տէ՛ր:

ՔՀՆ. Օրհնութիւն եւ փա՛ռք՝ Հօրը եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ա-մէն: Խ Խաղաղութիւն բոլորին:

ԴՊՐ. Նաեւ քու հոգիիդ:

ՍՐԿ. Աստուծոյ երկրպագենք:

ԴՊՐ. Քեզի կ'երկրպագենք, Տէ՛ր:

ՔՀՆ. Տէ՛ր, մեր Աստուածը, կարողութիւնդ անքննելի է, փառքո՛ անըմ-ըռնելի, սէրդ անչափ է, գթութիւնդ՝ անսահման: Քու առատ մարդասիրութեամբդ նայէ՛ այս ժողովուրդին, որ քուկդ է, եւ այս սուրբ տաճարին, եւ առատօրէն քու սէրդ եւ գթութիւնդ պարզեւէ մեզի եւ մեզի հետ աղօթողներուն: Որովհետեւ քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ Սուրբ Յարութեան ԱԶ.

Գովաբանէ՛ Տէրը, ո'վ Երուսաղէմ:

Քրիստոս յարութիւն առաւ մեռելներէն. ալէլուիա՛:

Եկէ՛ք, ժողովուրդներ, օրհնութիւն երգեցէք Տիրոջ. ալէլուիա՛:

Անոր՝ որ յարութիւն առաւ մեռելներէն. ալէլուիա՛, եւ աշխարհը լուսաւորեց. ալէլուիա՛:

(Ճաշու այլ շարականներ տես Էջ 42-45)

ՔՀՆ. Որովհետեւ յաւիտեան քուկդ են կարողութիւնը, զօրութիւնը եւ փառքը: Ամէն:

ՍՐԿ. Ուշադի՛ր եղէք:

**ԴՊՐ. ԱՌՎԱՐ Աստուած, սուրբ եւ հզօ՞ր, սուրբ եւ անմա՛հ, որ մեռելներէն
յարութիւն առիր, ողորմէ՛ մեզի: (Երեք անգամ)**

**Աւետումին եւ Ծննդեան
Որ յայտնուեցար մեզի համար, ողորմէ՛ մեզի:**

**Ծաղկազարդին
Որ եկար եւ վերստին պիտի գաս, ողորմէ՛ մեզի:**

**Համբարձման
Որ փառքով Հօրը քով համբարձար, ողորմէ՛ մեզի:**

**Հոգեգալուստին
Որ եկար եւ առաքեալներուն վրայ հանգչեցար, ողորմէ՛ մեզի:**

**Վարդավառին
Որ Թարոր լերան վրայ յայտնուեցար, ողորմէ՛ մեզի:**

**Աստուածածնի Վերափոխումին
Որ եկար քու մօրդ եւ կոյսին վերափոխումին համար, ողորմէ՛ մեզի:**

**Խաչի, Եկեղեցւոյ, Սրբոց տօներուն
Որ խաչուեցար մեզի համար, ողորմէ՛ մեզի:**

ՄՐԿ. Տիրոջմէ խաղաղութիւն աղեր-սենք դարձեալ:

ԴՊՐ. Տէ՛ր, ողորմէ՛:

**ՄՐԿ. Աշխարհի խաղաղութեան եւ սուրբ եկեղեցւոյ հաստատութեան հա-
մար աղաչենք Տիրոջ:**

ԴՊՐ. Տէ՛ր, ողորմէ՛:

**ՄՐԿ. Բոլոր սուրբ եւ ուղղահաւատ եպիսկոպոսներուն համար աղաչենք
Տիրոջ:**

ԴՊԲ. Տէ՛ր, ողորմէ՛:

ՄՐԿ. Մեր սրբազնագոյն Հայրապետին՝ տէր տէր (այս անուն) կաթողիկոսին արեւշատութեան եւ հոգիի փրկութեան համար աղաչենք Տի-ըռջ:

ԴՊԲ. Տէ՛ր, ողորմէ՛: Յիշէ՛, Տէ՛ր, եւ ողորմէ՛: Ողորմէ՛, Տէ՛ր: Քեզի կը յանձնուինք: Տէ՛ր, ողորմէ՛, Տէ՛ր, ողորմէ՛, Տէ՛ր, ողորմէ՛:
ՔՀՆ. Որովհետեւ ողորմած եւ մարդասէր ես, ով Աստուած, քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԱՍԽԵԼ

Կը կարդացուի Ճաշու ընթերցուածը

ԴՊԲ. Ալէլուիա, ալէլուիա:

Աստուած ոտքի ելաւ, եւ իր բոլոր թշնամիները ցրուեցան, զինք ատողները փախան իր ներկայութենէն:

(Ճաշու այլ ալէլուքներ տես էջ 46-48)

ՈՏՋԻ ԿԱՆԳՆԻԼ

ՄՐԿ. Ալէլուիա՛, ոտքի՛:

ՔՀՆ. X Խաղաղութիւն բոլորին:

ԴՊԲ. Նաեւ քու հոգիիդ:

ՄՐԿ. Երկիւղածութեամբ մտիկ ըրէք:

ՄՐԿ. Յիսուս Քրիստոսի Սուրբ Աւետարանը, ըստ (Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի կամ Յովհաննէսի):

ԴՊԲ. Փառք քեզի, Տէ՛ր, մեր Աստուածը:

ԱՐԿ. Ուշաղիր եղէք:

ԴՊԲ. Աստուած կը խօսի:

ԱՐԿ. (Կը կարդայ տօնացոյցին մէջ նշուած Աւետարանը):

ԴՊԲ. Փառք քեզի, Տէ՛ր, մեր Աստուածը:

Ապա կ'երգեն Նիկիական Հանգանակը, ձեռքերը իրարու միացուցած

ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿԼ

**Կը հաւատանք մէկ Աստուծոյ, ամենակալ Հօր, որ արարիչն է
երկինքին ու երկրին, երեւելի եւ աներեւոյթ ստեղծուածներուն:**

**Կը հաւատանք մէկ Տէր Յիսուս Քրիստոսի, Աստուծոյ Որդիին, որ
Հօր Աստուծմէ ծնած է որպէս միակ ծընունդ. այսինքն՝ Հօրը էութենէն է:
Աստուած է՝ Աստուծմէ ծնած, լոյս է՝ լոյսէն յառաջ եկած: Ճշմարիտ
Աստուծմէն ծնած ճշմարիտ Աստուած է, եւ ո՛չ՝ արարած: Անիկա Հօրը
բնութենէն է: Իրմով ստեղծուած է ամէն ինչ որ կայ երկինքի մէջ եւ
երկրի վրայ, երեւելի թէ աներեւոյթ:**

**Ինքն էր որ մեզի՝ մարդերուս եւ մեր փրկութեան համար երկինքէն
իջաւ եւ մարմին առաւ, մարդացաւ, Սուրբ Հոգիին ներգործութեամբ
սուրբ կոյս Մարիամէն ծնելով որպէս կատարեալ մարդ՝ մարմնով,
հոգիով եւ միտքով, եւ ամէն ինչով որ մարդկային է. ո՛չ թէ
երեւութապէս, այլ ճշմարտապէս: Զարչարուեցաւ, խաչուեցաւ,
թաղուեցաւ, երրորդ օրը յարութիւն առաւ, նոյն մարմինով երկինք ելաւ
եւ Հօրը աջ կողմը նստաւ: Վերստին պիտի գայ, նոյն մարմինով եւ Հօրը
փառքով, ողջերն ու մեռածները դատելու, ան՝ որուն թագաւորութիւնը
անվախճան է:**

**Կը հաւատանք անեղ եւ կատարեալ Սուրբ Հոգիին, որ խօսեցաւ
Օրէնքին, մարգարէներուն եւ աւետարաններուն ընդմէջէն. որ
Յորդանան գետին վրայ իջաւ, առաքեալներուն ուսուցանեց եւ
սուրբերուն մէջ բնակեցաւ:**

**Կը հաւատանք նաեւ մէկ, ընդհանրական եւ առաքելական սուրբ
եկեղեցիին. մէկ մկրտութեան, ապաշխարութեան, մեղքերու քաւութեան**

Եւ թողութեան. մեռելներու յարութեան, հոգիներու եւ մարմիններու յաւիտենական դատաստանին, երկինքի արքայութեան հաստատումին եւ յաւիտենական կեանքին:

ՍՐԿ. Իսկ անոնք որ կ'ըսեն՝ «Կար ժամանակ մը երբ չկար Որդին», կամ «Կար ժամանակ մը երբ չկար Սուրբ Հոգին», կամ կ'ըսեն՝ «Ոչինչէն ստեղծուեցան, կամ ուրիշ էութենէ մը գո-յացան Աստուծոյ Որդին եւ կամ Սուրբ Հոգին», եւ թէ՝ փոփոխութեան կամ այլայլումի ենթակայ են, ընդհանրական եւ առաքելական սուրբ եկեղեցին կը նզովէ այնպիսիները: **ՔՀՆ.** Բայց մենք կը փառաւորենք զայն՝ [Քրիստոսը] որ յաւիտեաններէն առաջ է, երկրպագելով Սուրբ Երրորդութեան՝ որ մէկ Աստուծ է, Հօրը եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: **Ամէն:**

ՍՐԿ. Տիրոջմէ խաղաղութիւն աղեր-սենք դարձեալ:

ԴՊՐ.ՏԷ՛Ր, ողորմէ՛:

ՍՐԿ. Մանաւանդ հաւատքով աղաչենք եւ խնդրենք, որ մեր Տէրը, մեր Աստուծը եւ փրկիչը՝ Յիսուս Քրիստոս այս պաշտամունքը եւ աղօթքները ընդունելու արժանի համարէ: Աղաչենք որ Տէրը լսէ մեր ձայնը, ընդունի մեր սրտարուխ խնդրանքները, ներէ մեր յանցանքները եւ ողորմի մեզի. որպէսզի միշտ մեր աղօթքներն ու խնդրանքները հասնին իրեն՝ մեր մեծ Տիրոջ, եւ ինք մեզ արժանի ընէ միասնաբար, մէկ հաւատքով եւ բարի գործերով աշխատելու արդարութեան համար: Խնդրենք որ ողորմի եւ իր շնորհքը տայ մեզի: Ամենակալ Տէր, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

ԴՊՐ.ՓՐԿէ՛, Տէր: Շնորհէ՛, Տէր, շընորհէ՛, Տէր, շնորհէ՛, Տէր: Տէր, ողորմէ՛: Քեզի կը յանձնուինք: Տէ՛ր, ողորմէ՛, Տէ՛ր, ողորմէ՛, Տէ՛ր, ողորմէ՛:

ՔՀՆ. Որպէսզի արժանի ըլլանք գոհութեամբ փառաւորելու քեզ, Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: **Ամէն:** X խաղաղութիւն բոլորին:

ԴՊՐ.Նաեւ քու հոգիիդ:

ՍՐԿ. Աստուծոյ երկրպագենք:

ԴՊԲ. Քեզի կ'երկրպագենք, Տէր:

ՔՀՆ. Քրիստոս, մեր փրկիչը, ամրապնդէ՛ մեզ քու խաղաղութեամբդ, որ կարելի չէ միտքով հասկնալ ու խօսքով բացատրել, եւ ամէն չարիքէ աներկի՛ւղ պահէ: Մեզ քու ճշմարիտ երկրպագուներուղ կարգին դասէ, որոնք հոգիով եւ ճշմարտութեամբ կ'երկրպագեն քեզի: Որովհետեւ ամենասուրբ Երրորդութեանդ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւր, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Օրհնեա՛լ է մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոսը: Ամէն:

ՍՐԿ. Օրհնէ՛, տէ՛ր:

ՔՀՆ. X Տէր Աստուած թող օրհնէ բո-լորդ:

ԴՊԲ. Ամէն:

ՆՍԽԼ

ՀԱԻԱՏԱՑԵԼՈՅ ՊԱՏԱՐԱԳ

ՍՐԿ. Զըլլայ որ անկնունք, անհաւատ, անապաշխար կամ անմաքուր ո- եւէ մէկը մօտենայ աստուածային այս խորհուրդին:

ԴՊԲ. Տիրոջ մարմինն է, փրկիչին արիւնն է ահա դրուած մեր դիմաց: Երկնային զօրքերը աներեւոյթ կեր- պով անդաղար կ'երգեն ըսելով. «Առ'ւրը, սո՛ւրը, սո՛ւրը ես, տիեզերքի՛ Տէր»:

ՍՐԿ. Դպիրնե՛ր, սաղմո՛ս երգեցէք մեր Տէր Աստուծոյն. քաղցր ձայնով հոգեւոր երգեր երգեցէք:

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ ԿԱՄ
ԾՈՒԿԻ ԳԱԼ

ՍՐԸԱՍԱՑՈՒԹԻՒՆ

Կիրակի օրերուն, Եկեղեցւոյ, Ծաղկազարդին եւ Հոգեգալուստին

ԴՊԲ. Հրեշտակներու յատուկ կարգերով լեցուցիր քու սուրբ Եկեղեցիդ,
ո՞վ Աստուած:

ԽՀազար հազարաւոր հրեշտակներ քու դիմացդ կը կանգնին եւ միլ-
իոնաւոր հրեշտակներ կը պաշտեն քեզ, ո՞վ Տէր: Եւ սակայն դուն ուզեցիր
որ մարդիկ օրհներգեն քեզ՝ խորհրդաւոր ձայնով, ըսելով. «Սուրբ, սուրբ,
սուրբ ես, տիեզերքի Տէր:

(Այլ սրբասացութիւններ տես էջ 48)

Հանդիսաւոր օրերուն՝ բարձրածայն

ՔՀՆ. Ալէլուիա, ալէլուիա:

**ՍՐԿ. Բացէ՛ք ձեր փեղկերը, ո՞վ դարպասներ, թող բացուին
յաւիտենութեան դռները, որպէսզի ներս մտնէ փառաւոր թագաւորը:**
ՔՀՆ. Ո՞վ է այս փառաւոր թագաւորը: Տէրն է, հզօր եւ անպարտելի.
Տէրը, պատերազմի մէջ անխորտակելի:

**ՍՐԿ. Բացէ՛ք ձեր փեղկերը, ո՞վ դարպասներ, թող բացուին
յաւիտենութեան դռները, որպէսզի ներս մտնէ փառաւոր թագաւորը:**

ՔՀՆ. Ո՞վ է այս փառաւոր թագաւոր-ը, ամենակալ Տէրը:

ՍՐԿ. Ի՞նքն է փառաւոր թագաւորը:

**ՔՀՆ. Օրհնեալ է ան՝ որ կու գայ Տիրոջ անունով: Օրհնեալ ես դուն, որ
եկար եւ վերստին պիտի գաս:**

ՍՐԿ. Դարձեալ խաղաղութիւն աղեր-սենք Տիրոջմէ:

ԴՊԲ. Տէ՛ր, ողորմէ:

ՍՐԿ. Մանաւանդ հաւատքով, սըր-բութեամբ եւ երկիւղով աղօթքի կանգ-նինք Աստուծոյ այս սուրբ սեղանին առջեւ, եւ ո՛չ թէ գայթակղալից խիղճով, նենգութեամբ ու խորամանկութեամբ, պատրանքով ու խարերայութեամբ, երկմտութեամբ եւ թերահաւատութեամբ։ Այլ՝ ուղիղ վարքով, պարզ միտքով, անկեղծ սրտով, կատարեալ հաւատքով, սիրով լեցուած եւ ամէն տեսակի բարի գործերով հարստացած աղօթքի կանգնինք Աստուծոյ այս սուրբ սեղանին առջեւ, եւ մեր փրկչին եւ Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի յայտնութեան օրը, Երկրորդ Գալստեան ատեն, ողորմութիւն գտնենք իրմէ։ Տէրը թող փրկէ մեզ եւ ողորմի մեզի։

ԴՊԲ. Փրկէ', Տէր, եւ ողորմէ' մեզի։

ՔՀՆ. Փրկէ' մեզ՝ մեր Տիրոջ եւ փրկչին՝ Յիսուսի Քրիստոսի շնորհքովն ու մարդասիրութեամբը. որուն հետ միասին քեզի՝ Հօրդ եւ Սուրբ Հոգիիդ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։ Խ խաղաղութիւն բոլորին։

ԴՊԲ. Նաեւ քու հոգիիդ։

ՍՐԿ. Աստուծոյ երկրպագենք։

ԴՊԲ. Քեզի կ'երկրպագենք, Տէ՛ր։

ՍՐԿ. Սուրբ համբոյրով ողջունեցէք իրար։ Իսկ դուք՝ որ չէք կրնար հա-ղորդուիլ աստուածային խորհուրդին, դուրս ելէք եւ հո՛ն աղօթեցէք։

ԴՊԲ. *Քրիստոս մեր մէջ յայտնուեցաւ. ինքը՝ Աստուած՝ հոս բազմեցաւ. խաղաղութեան կանչը հնչեց, սուրբ ողջոյն տալ հրահանգեց։ Եկեղեցին մէկ անձ դարձաւ, համբոյրով՝ կապն ամբողջացաւ. թշնամութիւնը հեռացաւ, բոլորին սէր սփռուեցաւ։ Արդ, բոլորս մէկ բարձրածայն օրհնութիւն տանք միաբերան՝ միասնական աստուածութեան, որուն սերովբէները ներբող կու տան։

* Սարկաւագը խորանէն խաղաղութեան համբոյրը կը բերէ ժողովուրդին, ըսելով. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»։ Ստացողը կը պատասխանէ. «Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի»։

Հանդիսաւոր օրերուն

ՍՐԿ. Դուք՝ որ հաւատքով կանգնած էք արքայական այս սուրբ սեղանին դիմաց, տեսէք բազմած Քրիստոս արքան, եւ զինք շրջապատող զօրքերն վերնական:

ԴՊԲ. Մեր աչքերը քեզի կը բարձրացնենք, եւ այս պաղատանքը կը ներկայացնենք.- Մեր մեղքերը մի՛ յիշեր, այլ գթութեամբդ քաւէ: Հրեշտակներուն եւ սուրբերուղ հետ միասին կ'օրհներզենք քեզ, Տէ՛ր, փա՛ռք քեզի:

ՍՐԿ. Երկիւղով ու պատկառանքով ուղիղ կանգնինք եւ ուշադրութեամբ նայինք:

ԴՊԲ. Քեզի, ո՛վ Աստուած:

ՍՐԿ. Պատարագուղը Քրիստոս է, Աստուծոյ անարատ Գառնուկը:

ԴՊԲ. Անիկա ողորմութիւն է եւ խաղաղութիւն, եւ մեր գոհութեան պատարագը:

ՔՀՆ. Հօրը եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին շնորհքը, սէրը եւ աստուածային սրբացուցիչ զօրութիւնը Խ ձեզի՝ բոլորիդ հետ ըլլայ:

ՆՈՏԻԼ

ԴՊԲ. Ամէն: Նաեւ քու հոգիիդ:

ՍՐԿ. Դոները, դռները փակեցէք, եւ ամբողջապէս կեղրոնացած ուշադրութեամբ եւ աստուածավախութեամբ ձեր միտքերը վեր բարձրացուցէք՝ աստուածային այս խորհուրդին:

ԴՊԲ. Մեր միտքերը քեզի բարձրացուցած ենք, ամենակա՛լ Տէր:

ՍՐԿ. Եւ ամբողջ սրտով գոհութիւն յայտնենք Տիրո՞յ:

ԴՊԲ. Իրաւացի է եւ արդար:

**ՔՀՆ. Եւ շնորհեց, որ սերովբէներուն ու քերովբէներուն ձայնակցելով՝
քու սրբութիւնդ երգենք ու եղանակենք, բարձրաղաղակ զոչելով եւ
ըսելով.-**

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ

**ԴՊԲ. Սուրբ, սուրբ, սուրբ ես, տիեզերքի' Տէր: Երկինք ու երկիր փառ-
քովդ են լեցուն: Օրհնութիւն քեզի՝ բարձունքներուն մէջ: Օրհնեալ ես
դուն, որ Տիրոջ անունով եկար եւ պիտի զաս: Ովսաննա՛ բարձունքներուն
մէջ:**

**ՔՀՆ. Առէ՛ք, կերէ՛ք, ասիկա իմ մար- մինս է, որ ձեզի եւ շատերուն համար
կը բաշխուի, մեղքերու քաւութեան եւ թողութեան համար:**

ԴՊԲ. Ամէն:

**ՔՀՆ. Խմեցէք ասկէ բոլորդ. ասիկա նոր ուխտի իմ արիւնս է, որ ձեզի եւ
շատերուն համար կը թափուի, մեղքե-րու քաւութեան եւ թողութեան
համար:**

**ԴՊԲ. Ամէն: Երկնաւո՛ր Հայր, որ քու Որդիդ մահուան մատնեցիր՝ մեր
մեղ- քերուն պարտքը վճարելու համար: Անոր թափած արեան
միջնորդութեամբ կ'աղա- չենք քեզի, ողորմէ՛ քու բանաւոր հօտիդ:**

**ՔՀՆ. Քու կողմէդ մեզի պարզեւ-ուածը քեզի՛ կ'ընծայենք՝ ամէն ինչի եւ
բոլորին փոխարէն:**

**ԴՊԲ. Ամէն բանի համար օրհնեալ ես, Տէ՛ր: Կ'օրհնաբանենք քեզ, զոհու-
թիւն կը յայտնենք եւ կ'աղաչենք քեզի, Տէ՛ր, մեր Աստուածը:**

ՄՐԿ. Օրհնէ՛, տէ՛ր:

ՔՀՆ. Խ Խաղաղութիւն բոլորին:

ԴՊԲ. Նաեւ քու հոգիիդ:

ՄՐԿ. Աստուծոյ երկրպագենք:

ԴՊԲ. Քեզի կ'երկրպագենք, Տէ՛ր: Որդի՛ Աստուծոյ, որ Հայրը մեզի հետ հաշտեցնելու համար զոհ մատուցուեցար եւ իբրեւ կեանքի հաց կը բաշխուիս մեզի: Քու թափած սուրբ արեանդ միջնորդութեամբ, կ'աղաչենք քեզի, ողորմէ՛ քու արիւնովդ փրկուած բանաւոր հօտիդ:

ՔՀՆ. Որպէսզի ասիկա բոլոր մօտեցողներուս համար առիթ ըլլայ դատապարտութենէ զերծ մնալու, եւ մեղքերու քաւութեան ու թողութեան:

ԴՊԲ. Հոգի՛ Աստուծոյ, դուն՝ որ երկինքէն կ'իջնես՝ մեր ձեռքերով իր լրումին հասցնելու համար քեզի փառակից Որդիին պատարագումին խորհուրդը: Անոր թափած արեան միջնորդութեամբ կ'աղաչենք քեզի, հանգիստ պարզեւէ մեր ննջեցեալներու հոգիներուն:

ԵՍԽԼ

ՔՀՆ. Անոնց հետ միասին մեզի՛ ալ ողորմէ, բարերա՛ր Աստուծած, կ'աղաչենք:

ԴՊԲ. Յիշէ՛, Տէ՛ր, եւ ողորմէ՛ մեզի:

ՔՀՆ. Այս սուրբ պատարագով յիշէ՛ Աստուծածին սուրբ կոյս Մարիամը, Յովհաննէս Մկրտիչը, Ստեփանոս Նախավկան եւ բոլոր սուրբերը, կ'աղաչենք:

ԴՊԲ. Յիշէ՛, Տէ՛ր, եւ ողորմէ՛ մեզի:

ՄՐԿ. Այս սուրբ պատարագով յիշէ՛ սուրբ առաքեալները, մարգարէները, վարդապետները, մարտիրոսները, եւ բոլոր սուրբ հայրապետները, առաքելագործ եպիսկոպոսները, երէցները, ուղղահաւատ սարկաւագները, եւ բոլոր սուրբերը, կ'աղաչենք:

ԴՊՐ.ՑԻՉՇ', ՏԷ՛Ր, Եւ ողորմէ՛ մեզի:

Սրբոց տօներուն ըսել հետեւեալը.

ՄՐԿ. Այս սուրբ պատարագով, կ'աղաչենք, յիշէ՛ սուրբ եւ աստուածահաճոյ (այս անունը), որուն (կամ՝ որոնց) յիշատակը կատարեցինք այսօր:

ԴՊՐ.ՑԻՉՇ', ՏԷ՛Ր, Եւ ողորմէ՛ մեզի:

ՄՐԿ. Քրիստոսի օրհնեալ, գովեալ եւ փառաւորեալ, հրաշալի եւ աստուածազարդ յարութեան կ'երկրպաղենք:

ԴՊՐ. Փա՛ռք քու յարութեանդ, ՏԷ՛Ր:

**ՄՐԿ. Այս սուրբ պատարագով յիշէ՛ մեր առաջնորդներն ու առաջին լուսաւորիչները՝ սուրբ Թաղէոս եւ Բարթողիմէոս առաքեալները,
Գրիգոր Լուսաւորիչը, Արիստակէսը, Վրժանէսը, Յովսիկը, Գրիգորիսը,
Ներսէսը, Սահակը, Դանիէլն ու Խաղը, Մեսրոպ Վարդապետը, Գրիգոր
Նարեկացին, Ներսէս Կլայեցին, Յովհաննէս Որոտնեցին, Գրիգոր եւ
Մովսէս Տաթեւացիները, եւ սուրբ Գրիգորներու եւ Ներսէսներու բոլոր
հետեւորդները, Հայ ժողովուրդի հովիւներն ու հովուապետները,
կ'աղաչենք:**

ԴՊՐ. ՑԻՉՇ', ՏԷ՛Ր, Եւ ողորմէ՛ մեզի:

**ՄՐԿ. Այս սուրբ պատարագով՝ յիշէ՛ սուրբ ճգնաւորները, առաքինասէր
եւ աստուածուսոյց կրօնաւորները՝ Պօղոսը, Անտոնը, Պօղը, Մակարը,
Ոնոփրիոսը, Աբբայ Մարկոսը, Մրապիոնը, Նեղոսը, Արսէնը, Եւագրը,
Պարսամը, Յովհաննէսի եւ Սիմէոնի հետեւորդները, սուրբ Ուսկիի եւ
Մուքիասի հետեւորդները, ինչպէս նաեւ բոլոր սուրբ հայրերը եւ աշխարհի
բոլոր կողմերուն անոնց աշակերտողները, կ'աղաչենք:**

ԴՊՐ. ՑԻՉՇ', ՏԷ՛Ր, Եւ ողորմէ՛ մեզի:

**ՄՐԿ. Այս սուրբ պատարագով յիշէ՛ հաւատացեալ եւ սուրբ
թագաւորները՝ Աբգարը, Կոստանդիանոսը, Տրդատը եւ Թէոդոսը, եւ**

բոլոր սուրբ եւ բարեպաշտ թագաւորներն ու աստուածասէր իշխանները,
կ'աղաչենք:

ԴՊԲ. Յիշ, Տէր, եւ ողորմէ՛ մեզի:

ՄՐԿ. Այս սուրբ պատարագով նաեւ համընդհանուր կերպով յիշէ՛ բոլոր
հաւատացեալները, այր թէ կին, ծեր թէ մանուկ, եւ ամէն տարիքի այն ան-
ձերը, որոնք հաւատքով եւ սրբութեամբ Քրիստոսի միացան եւ ննջեցին,
կ'աղաչենք:

ԴՊԲ. Յիշէ՛, Տէր, եւ ողորմէ՛ մեզի:

ՈՏՋԻ ԿԱՆԳՆԻԼ

ՔՀՆ. Մանաւանդ յիշէ՛ մեր եպիսկոպոսապետը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ
բոլոր Հայոց պատուական հայրապետը՝ տէր տէր (այս անուն)
սրբազնագոյն կաթողիկոսը, եւ մեր թեմի բարեջան առաջնորդը՝ տէր (այս
անուն) սրբազան արքեպիսկոպոսը: Շնորհէ՛ որ ա-նոնք երկար ատեն
մեզ հովուեն ուղիղ ուսուցումով:

ՄՐԿ. Գոհութիւն եւ փառաբանութիւն կ'ընծայենք քեզի, ո'վ Տէր, մեր
Աստուածը, այս սուրբ եւ անմահ պատարագին համար, որ այս սուրբ
սեղանին վրայ դրուած է: Շնորհէ զայն մեզի, որպէսզի անով սրբուինք եւ
կենդանանանք: Ասով՝ սէր, կայունութիւն եւ բաղձացուած
խաղաղութիւնը շնորհէ ամբողջ աշխարհին, սուրբ եկեղեցիին, բոլոր
ուղղահաւատ եպիսկոպոսներուն, մեր եպիսկոպոսապետին՝ Մեծի Տանն
Կիլիկիոյ բոլոր Հայոց պատուական հայրապետին՝ տէր տէր (այս անուն)
կաթողիկոսին, մեր թեմի բարեջան առաջնորդ՝ տէր (այս անուն)
սրբազան արքեպիսկոպոսին, եւ քահանային որ այս պատարագը կը
մատուցանէ:

Յաղթութիւն շնորհէ քրիստոնեայ պետութիւններուն, բարեպաշտ
իշխողներուն եւ անոնց բանակներուն: Աղօթենք եւ խնդրենք նաեւ
հանգուցեալ անձերուն եւ մանաւանդ՝ մեր հանգուցեալ հայրապետներուն
համար, ինչպէս նաեւ այս սուրբ եկեղեցին շինողներուն, եւ անոր
հովանիին տակ ննջած մարդոց համար: Ազատութիւն խրնդ- րենք

գերեվարուած մեր եղբայրներուն համար, շնորհք՝ այստեղ ներկայ ժողովուրդին, եւ հանգիստ անոնց՝ որոնք հաւատքով եւ սրբութեամբ Քրիստոսի միացան եւ մեռան։ Կ'աղաչենք, ասոնք բոլորը յիշէ՛ այս սուրբ պատարագով։

ԴՊԲ. Բոլորին կողմէ կ'աղաչենք՝ բոլորին համար։

ՔՀՆ. Եւ թող մեր մեծ Աստուծոյն եւ փրկչին՝ Յիսուս Քրիստոսի սէրը Խձեր բոլորին հետ ըլլայ։

ՆՍԽԼ

ԴՊԲ. Ամէն։ Նաեւ քու հոգիիդ։

ՄՐԿ. Դարձեալ խաղաղութիւն աղերսենք Տիրոջմէ։

ԴՊԲ. Տէ՛ր, ողորմէ՛։

ՄՐԿ. Բոլոր այն սուրբերուն հետ միասին, զորս յիշատակեցինք, առաւել եւս Տիրոջ աղաչենք։

ԴՊԲ. Տէ՛ր, ողորմէ՛։

ՄՐԿ. Այս սուրբ սեղանին մատուցուած սուրբ եւ աստուածային, անմահ պատարագին միջոցաւ աղաչենք Տիրոջ։

ԴՊԲ. Տէ՛ր, ողորմէ՛։

ՄՐԿ. Որպէսզի Տէրը, մեր Աստուածը, որ զայն ընդունեց իր սուրբ, երկնային եւ աննիւթական սրբարանին մէջ, անոր փոխարէն Սուրբ Հոգիին շնորհքներն ու պարզեւները դրկէ մեզի. աղաչենք Տիրոջ։

ԴՊԲ. Տէ՛ր, ողորմէ՛։

ՄՐԿ. Ընդունէ եւ փրկէ՛ մեզ, Տէ՛ր. ողորմէ՛ մեզի եւ քու շնորքովդ պահէ՛ մեզ։

ԴՊԲ. Փրկէ՛ մեզ, Տէ՛ր, եւ ողորմէ՛ մեզի:

ՄՐԿ. Ամենասրբուհի Աստուածածինը՝ միշտ կոյս Մարիամը յիշատակելով բոլոր սուրբերուն հետ միասին, Տիրոջ աղաչենք:

ԴՊԲ. Յիշէ՛, Տէ՛ր, եւ ողորմէ: Ողորմէ՛, Տէ՛ր: Քեզի կը յանձնուինք: Տէ՛ր, ողորմէ՛, Տէ՛ր, ողորմէ՛, Տէ՛ր, ողորմէ՛:

ՔՀՆ. Եւ թոյլ տուր, որ համարձակօրէն դիմենք քեզի, ո՞վ երկնաւոր Հայր, եւ երգածայն աղօթքով ըսենք.-

ՈՏՁԻ ԿԱՆԳՆԻԼ

ԴՊԲ. Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի՛ անունդ: Թող գայ արքայութիւնդ. թող կատարուի քու կամքո, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօր եւս մեզի տուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք գործած են: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք. այլ՝ մեզ չարէն ազատէ՛:

ՔՀՆ. Որովհետեւ քուկդ են միշտ՝ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը: Ամէն: X Խաղաղութիւն բոլորին:

ԴՊԲ. Նաեւ քու հոգիիդ:

ՄՐԿ. Աստուծոյ երկրպագենք:

ԴՊԲ. Քեզի կ'երկրպագենք, Տէ՛ր:

ՔՀՆ. Քրիստոս Յիսուսի, մեր Տիրոջ միջոցաւ, որուն հետ քեզի՝ Սուրբ Հոգիիդ եւ ամենակալ Հօրը կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւր, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՄՐԿ. Ուշաղիր նայինք:

ՔՀՆ. Տեսէ՛ք Սուրբը, որ սուրբերուն կը տրուի:

ԴՊՐ. Դուն ես միակ Սուրբը, դուն ես միակ Տէրը, Յիսո՛ւս Քրիստոս,
Հայրն Աստուածը փառաւորելու համար։ Ամէն։

ՔՀՆ. Օրհնեա՛լ ես, Սո՛ւրբ Հայր, Աստուած ճշմարիտ։

ԴՊՐ. Ամէ՞ն։

ՔՀՆ. Օրհնեա՛լ ես, Սո՛ւրբ Որդի, Աստուած ճշմարիտ։

ԴՊՐ. Ամէ՞ն։

ՔՀՆ. Օրհնեա՛լ ես, Սո՛ւրբ Հոգի, Աստուած ճշմարիտ։

ԴՊՐ. Ամէ՞ն։

ՔՀՆ. Օրհնութիւն եւ փառք՝ Հօրը եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին, այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

ԴՊՐ. Ամէ՞ն։ Հայր Սուրբ, Որդի Սուրբ, Հոգի Սուրբ։ Օրհնութիւն եւ
փառք՝ Հօրը եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից։ Ամէն։

ՔՀՆ. Սրբութեամբ ճաշակենք մեր Տիրոջ եւ փրկչին՝ Յիսուս Քրիստոսի
սուրբ եւ թանկագին մարմինէն ու արիւնէն, որ երկինքէն իջած՝ մեզի կը
ըաշխուի։ Խ Ասիկա կեանք է, յարութիւն, յոյս եւ մեղքերու քաւութիւն ու
թողութիւն։ Սաղմո՛ս երգեցէք Տիրոջ, մեր Աստուծոյն։ Սաղմո՛ս երգեցէք
մեր երկնաւոր, անմահ թագաւորին, որ քերովբէական կառքի վրայ կը
նըս-տի։

ՆՈՒՄԸՆ

ԴՊՐ. Տէր, ողորմէ՛, Տէր, ողորմէ՛, Տէր, ողորմէ՛, Տէր, ողորմէ՛։

ՄՐԿ. Տէր, ողորմէ՛, Տէր, ողորմէ՛, Տէր, ողորմէ՛, Տէր, ողորմէ՛։

ԴՊԲ. Ամենասուրբ Երրորդութիւն, տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն:

ՄՐԿ. Հիւանդներուն՝ բժշկութիւն, նըն-ջածներուն՝ արքայութիւն:

Կամ

ԴՊԲ. Մեզի եկո՛ւր, ո՛վ մեր հայրերուն Աստուածը, որ ճնշուածներուն ապաւէնն ես:

ՄՐԿ. Օգնութեան փութա՛ ծառաներուդ, օգնական եղիր Հայոց ազգին:

ԴՊԲ. Տէր, ողորմէ՛, Տէր, ողորմէ՛, Յիսուս փրկիչ, մեզի ողորմէ՛:

ՄՐԿ. Սուրբ եւ անմահ եւ կենարար այս պատարագին միջնորդութեամբ:

ԴՊԲ. Հնդունէ՛ մեր խնդրանքը, Տէ՛ր, եւ ողորմէ՛:

ՄՐԿ. Ո՛վ դպիրներ, սաղմոս երգեցէք Տիրոջ, մեր Աստուծոյն. քաղցր ձայնով հոգեւոր երգեր երգեցէք, որովհետեւ սաղմոս եւ օրհներգութիւն կը վայելեն անոր, ալէլուիաներ եւ հոգեւոր երգեր: Ո՛վ սպասաւորներ, երգեցէք եւ սաղմոսեցէ՛ք, եւ օրհներգեցէ՛ք Տէրը երկինքի մէջ:

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ

ԴՊԲ. Օրհնեա՛լ է Աստուած:

Քրիստոս իբրեւ զոհ ընծայուելով մեզի կը բաշխուի. ալէլուիա:

Իր մարմինը մեզի կու տայ իբրեւ կերակուր, եւ իր սուրբ արիւնը կը ցօղէ մեր վրայ. ալէլուիա:

Մօտեցէ՛ք Տիրոջ եւ իրմէ լո՛յս ա-ռէք. ալէլուիա:

Ճաշակեցէք եւ տեսէք՝ թէ ի՞նչքան բարի է Տէրը. ալէլուիա:

Օրհներգեցէ՛ք Տէրը երկինքի մէջ. ալէլուիա:

Օրհներգեցէ՛ք զայն բարձունքներուն մէջ. ալէլուիա:

Օրհներգեցէ՛ք զայն, ո՛վ անոր հրեշտակները. ալէլուիա:

Օրհներգեցէ՛ք զայն, ո՛վ անոր բոլոր զօրքերը. ալէլուիա:

ԾՈՒՆԿԻ ԳԱԼ ԿԱՄՆԱՏԻԼ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

ՄԻԱՍԻՆ. Մեղանչեցի ամենասուրբ Երրորդութեան՝ Հօրը եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին դէմ: Մեղաւոր եմ Աստուծոյ առջեւ: Բոլոր մեղքերս կը խոստովանիմ Աստուծոյ առջեւ, սուրբ Աստուածածինին եւ բոլոր սուրբերուն առջեւ, ինչպէս նաեւ քու առջեւդ, հայր սուրբ: Մեղանչեցի՝ մտածումով, խօսքով ու գործով, կամայ թէ ակամայ, գիտակցաբար թէ անգիտակցաբար՝ մեղայ Աստուծոյ:

ՔՀՆ. Աստուած թողութիւն թող շնորհէ:

ՄԻԱՍԻՆ. Մեղանչեցի այն եօթը յանցանքներով, որոնք մահացու մեղքերն են.- հպարտութեամբ, նախանձով, բարկութեամբ, ծուլութեամբ, ազահութեամբ, որկրամոլութեամբ, ցանկամոլութեամբ, եւ ասոնց բոլոր տեսակներով՝ մեղայ Աստուծոյ:

ՔՀՆ. Աստուած թողութիւն թող շնորհէ:

ՄԻԱՍԻՆ. Եւ դեռ մեղանչեցի Աստուծոյ բոլոր պատուիրաններուն դէմ, թէ՛ յանձնառութիւններուս եւ թէ՛ հրաժարելիքներուս մէջ, որովհետեւ ո՛չ յանձն առածներս կատարեցի եւ ո՛չ ալ հրաժարածներէս հեռացայ: Օրէնքը սորվեցայ, սակայն Օրէնքի գործադրութեան մէջ ծուլացայ:

Քրիստոնէութեան շարքերուն մէջ անցայ, բայց գործերովս անարժան գտնուեցայ: Զարիքը գիտնալով հանդերձ՝ կամովին նուաստացայ, եւ ես իմ կամքովս բարի գործերէն հեռացայ: Վա՛յ ինծի, վա՛յ ինծի, վա՛յ ինծի. ո՞ր մէկը ըսեմ, ո՞ր մէկը խոստովանիմ, ա՛յնքան շատ են յանցանքներս, չըսուելիք են անօրէնութիւններս, աններելի են ցաւերս եւ անբժշկելի են վէրքերս, մեղայ Աստուծոյ:

ՔՀՆ. Աստուած թողութիւն թող շնորհէ:

ՄԻԱՍԻՆ. Հայր սուրբ, ինծի համար հաշտութեան միջնորդ եւ բարեխօս եղիր Աստուծոյ Միածին Որդիին քով, եւ քեզի տրուած իշխանութեամբ՝ զիս իմ մեղքերուս կապանքներէն արձակէ, կ'աղաչեմ քեզի:

ԱՐՁԱԿՈՒՄ

ՔՀՆ. Տէ՛ր, ողորմէ՛, Տէ՛ր, ողորմէ՛, Տէ՛ր, ողորմէ՛:

Թող մարդասէրն Աստուած ի՞նք ողորմի քեզի եւ թողութիւն շնորհէ քու բոլոր յանցանքներուն՝ խոստովանածներուն եւ մոռցածներուն։ Իսկ ես քահանայական իշխանութեան կարգովս, եւ աստուածային հրամանով՝ թէ «ինչ որ կ'արձակէք երկրի վրայ, թող արձակուի երկինքի մէջ», նոյն խօսքով կ'արձակեմ քեզ մտածումներով, խօսքերով եւ գործերով կատարած բոլոր մեղքերէղ, Հօրը եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով։ Եւ դարձեալ կը հաստատեմ քեզ սուրբ Եկեղեցւոյ խորհուրդներուն մէջ, որպէսզի ինչ լաւ բաներ որ ընես՝ անոնք ըլլան քեզի համար բարի գործեր եւ հանդերձեալ կեանքի համար՝ փառք։ Ամէն։

ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ

ՄՐԿ. Երկիւղածութեամբ ու հաւատքով մօտեցէ՛ք եւ սրբութեամբ հաղորդուեցէք։

ԴՊՐ. Մեր Տէրը եւ Աստուածը երեւցաւ մեզի։ Օրհնեա՛լ ըլլայ ան՝ որ Տիրոջ անունով կու գայ։

ՔՀՆ. Փրկէ՛, Տէ՛ր, քու ժողովուրդդ, Խօրհնէ՛ քու ժառանգութիւնդ. Հովուէ՛ եւ բարձրացո՛ւր զանոնք, այժմէն մինչեւ յաւիտեան։

ԴՊՐ. Քու բարիքներովդ լիացանք, ո՛վ Տէր, մարմինդ եւ արիւնդ ճաշակելով։ Փա՛ռք քեզի, որ բարձունքներուն մէջ կը բնակիս եւ կը կերակրես մեզ։ Դուն՝ որ միշտ կը կերակրես մեզ, քու հոգեւոր օրհնութիւնդ դրկէ մեզի։ Փա՛ռք քեզի, որ բարձունքներուն մէջ կը բնակիս եւ կը կերակրես մեզ։

ՄՐԿ. Դարձեալ խաղաղութիւն աղերսենք Տիրոջմէ։

ԴՊՐ. Տէ՛ր, ողորմէ՛։

ՄՐԿ. Մանաւանդ դուք՝ որ հաւատքով ճաշակեցիք աստուածային, սուրբ, երկնային, անարատ եւ անապական այս խորհուրդէն, շնորհակալութիւն յայտնեցէք Տիրոջ։

ԴՊԲ.Շնորհակալութիւն կը յայտ-նենք քեզի, Տէ՛ր, որ մեզ կերակրեցիր անմահական քու սեղանէդ, մարմինդ եւ արիւնդ բաշխելով աշխարհի փրո-կութեան եւ մեր հոգիներու կենդա-նութեան համար:

ԱՐՁԱԿՈՒՄ

ՔՀՆ. Դուն, որ կ'օրհնես քեզ օրհ-նաբանողները, Տէ՛ր, եւ կը սրբես քեզի վստահողները:

ԴՊԲ. Օրհնեա՛լ է Աստուած:

ՔՀՆ. Փրկէ՛ քու ժողովուրդ, օրհնէ՛ քու ժառանգութիւնդ. քու եկեղեցիդ ամբո՛ղջ պահէ:

ԴՊԲ. Ամէ՛ն:

ՔՀՆ. Սրբէ՛ ասոնք, որոնք սիրով յօ-ժարեցան քու տունդ վայելուչ պահել: Փառաւորէ՛ մեզ աստուածային քու զօրութեամբդ, եւ մի՛ լքեր քեզի ապա-ւինողներս:

ԴՊԲ. Ամէ՛ն:

ՔՀՆ. Քու խաղաղութիւնդ պարզեւէ ամբողջ աշխարհին, եկեղեցիներուն, քահանաներուն, քրիստոնեայ թագաւորներուն, Հայոց ազգի հայրապետութեան ու հանրապետութեան, Ամերիկայի Միացեալ Նահանգներու հանրապետութեան, անոնց բանակին եւ ամբողջ ժողովուրդին:

ԴՊԲ. Ամէ՛ն:

ՔՀՆ. Որովհետեւ բոլոր բարի նուէրները եւ բոլոր կատարեալ պարզեւները երկինքէն՝ քեզմէ կու զան, ո՛վ Հայոց, որ լոյսի արարիչն ես: Եւ քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնը եւ պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԴՊՐ.Ամէն: Տիրոջ անունը օրհնեալ ըլլայ այժմէն մինչեւ յաւիտեան։ Տիրոջ անունը օրհնեալ ըլլայ այժմէն մինչեւ յաւիտեան։ Տիրոջ անունը օրհնեալ ըլլայ այժմէն մինչեւ յաւիտեան։

ՔՀՆ.Դուն, որ Օրէնքին եւ մարգարէութեանց լրումն ես, ո՛վ մեր Աստուածն ու փրկիչը՝ Քրիստոս, եւ Հօրը կամքով իրենց կատարումին հասցուցիր բոլոր տնօրինութիւնները, Սուրբ Հոգիով՝ վղ լեցուր մեզ*։

ՄՐԿ. Ոտքի՛:

ՔՀՆ. X Խաղաղութի՛ւն բոլորին:

ԴՊՐ.Նաեւ քու հոգիիդ:

ՄՐԿ. Երկիւղածութեամբ մտի՛կ ըրէք:

ՔՀՆ. Յիսուս Քրիստոսի Սուրբ Աւետարանը ըստ Յովհաննէսի (1.1-14):

ԴՊՐ. Փա՛ռք քեզի, Տէր, մեր Աստուածը:

ՄՐԿ. Ուշաղիր եղէք:

ԴՊՐ. Աստուած կը խօսի:

ՔՀՆ. Լոյաին Հօրմէն:

Աշխարհի ստեղծագործութենէն առաջ գոյութիւն ունէր Բանը։ Բանը Աստուծոյ հետ էր եւ Բանը Աստուած էր։ Անիկա սկիզբէն Աստուծոյ հետ էր։

Անով էր որ Աստուած ամէն ինչ ստեղծեց. առանց անոր ո՛չ մէկ բան ստեղծեց։ Կեանքը անով սկիզբ առաւ։ Եւ կեանքը մարդոց համար լոյսն է՝ որ խաւարին մէջ կը փայլի. բայց խաւարը չկրցաւ հասկնալ զայն։

Յովհաննէս, որ Աստուծոյ կողմէ ղրկուած մարդ մըն էր, եկաւ լոյսին համար վկայութիւն տալու, որպէսզի ամէն մարդ անոր միջոցաւ

Հաւատայ: **Ինք լոյսը չէր, այլ՝ լոյսին համար վկայ մը:** Բանն էր ճշմարիտ լոյսը, որ աշխարհ գալով՝ կը լուսաւորէ ամբողջ մարդկութիւնը:

Աշխարհի մէջ էր անիկա, աշխարհը իրմով ստեղծուեցաւ, սակայն աշխարհը չճանչցաւ: Ի՛ր իսկ ստեղծած աշխարհը եկաւ, բայց իր իսկ ստեղծած մարդիկը զինք չընդունեցին: Իսկ զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու. ո՛չ արեան ճամբով եւ ո՛չ մարմինի կամ մարդկային կամքով, այլ՝ Աստուծմէ ծնելով:

Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ եւ մենք տեսանք անոր փառքը. փառքը Միածինին, որ Հօրմէն եկաւ՝ չնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն:

ՍՐԿ. Փա՛ռք քեզի, Տէր, մեր Աստուածը:
Սուրբ խաչին ապաւինելով աղա- չենք Տիրոջ, որ անով մեզ ազատէ մեր մեղքերէն, եւ իր ողորմութեամբը փրկէ: Ամենակալ Տէր, մեր Աստուածը, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

ՔՀՆ. Քրիստոս, մեր Աստուածը, եւ հաւատացեալներուն պահապանն ու յոյսը, սուրբ եւ պատուական խաչիդ հովանիին տակ՝ խաղաղութեան մէջ պահէ, պահպանէ եւ օրհնէ այստեղ ներկայ ժողովուրդը: Փրկէ՛ տեսանելի եւ անտեսանելի թշնամիներէն, եւ արժանի ըրէ՝ գոհութեամբ փառաւորելու քեզ, Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԴՊՐ. Անդաղար Տէրը պիտի օրհնաբանեմ, անոր օրհներգութիւնը շրթներուս վրայ պիտի ըլլայ շարունակ:

ՔՀՆ. X Օրհնեա՛լ ըլլաք Սուրբ Հո- գիին չնորհքներով: Խաղաղութեամբ գացէք, եւ Տէրը ձեզի՝ բոլորիդ հետ ըլլայ: Ամէն:



ՊԱՇՏՈՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ

ՄՐԿ. Տիրոջմէ խաղաղութիւն աղերսենք դարձեալ: Ընդունէ՛, Տէ՛ր, փրկէ՛
մեզ եւ ողորմէ՛ մեզի:

ՔՀՆ. Օրհնութիւն եւ փա՛ռք Հօրը եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին, այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԴՊԲ. Դուն՝ որ ոչինչէն ստեղծեցիր ըո՛լոր գոյութիւնները, ո՛վ Հօրը
արարչակից Բան Աստուած, երբոր գաս՝ քու անարատ ձեռքերովդ
ստեղծածներդ դատելու, թողութիւն շնորհէ քու ննջե-ցեալ ծառաներուդ:

Դուն՝ որ կը թագաղրես քու սուրբերդ, եւ անվախճան բարիքներ կը
բաշխես, երբոր գաս՝ քու անարատ ձեռքերովդ ստեղծածներդ դատելու,
թողութիւն շնորհէ քու ննջեցեալ ծառաներուդ:

Կամ

Ո՛վ Տէ՛ր, զթա՛մեր ննջեցեալներուն հոգիներուն եւ ողորմութեամբդ յիշէ՛
զիրենք, որովհետեւ քու սուրբ արեանդ զինով զնեցիր զիրենք: Յիշէ՛, երբ
լսուի փողին հրաշալի ձայնը եւ մեռելները ելլեն ու կանգնին քու ահաւոր
ատեանիդ առջեւ:

ԴՊԲ. Ալէլուիա, ալէլուիա:

Մեղքերուս խորը ընկղմած՝ քեզ օգնութեան կը կանչեմ, Տէ՛ր. ո՛վ Տէ՛ր, լսէ՛
իմ ձայնս, պաղատանքի կանչիս դիմաց ականջներդ թող բա՛ց ըլլան:

ՄՐԿ. Ալէլուիա՛, ոտքի:

ՔՀՆ. Խ խաղաղութիւն ըոլորին:

ԴՊԲ. Նաեւ քու հոգիիդ:

ՄՐԿ. Երկիւղածութեամբ մտիկ ըրէք:

ՔՀՆ. Յիսուս Քրիստոսի սուրբ Աւետարանը, ըստ Յովհաննէսի (12.24-26):

ԴՊՐ. Փա՛ռք քեզի, Տէ՛ր, մեր Աստուածը:

ՄՐԿ. Ուշաղիր եղէք:

ԴՊՐ. Աստուած կը խօսի:

ՔՀՆ. Մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս կ'ըսէ.

Վստահ գիտցէք, որ եթէ ցորենի հատիկը հողին մէջ չիյնայ եւ չմեռնի, ինք որպէս առանձին հատիկ կը մնայ, իսկ եթէ մեռնի՝ բազմաթիւ հատիկներ կու տայ: Ով որ իր անձը կը սիրէ, կը կորսնցնէ զայն, իսկ ով որ իր անձը կ'անտեսէ այս աշխարհի վրայ՝ զայն յաւիտենական կեանքին համար պահած կ'ըլլայ: Ով որ ուզէ ինծի ծառայել պէտք է ինծի հետեւի, եւ ինծի ծառայողը պիտի ըլլայ հոն՝ ուր ես կը գտնուիմ: Եւ Հայրս պիտի պատուէ ինծի ծառայողը:

ԴՊՐ. Քահանաներ ու ժողովուրդ՝ միասնաբար կը խնդրենք քեզմէ,
բարեգո՛ւթ Տէր. հաւատքով ննջողներուն հետ ընդունէ մե՛զ եւս, որ
յարութեան նոյն յոյսը ունինք, վերին Երուսաղէմ քաղաքին մէջ, ուր
արդարները կը ժողվուին, որպէսզի անոնց հետ միասին շարունակ
փառաբանութի՛ւն երգենք Երրորդութեան երեք անձերուն:

Ընդունէ՛ մեզ վերին Երուսաղէմի մէջ, որ հրեշտակներու ընակարանն է,
եղեմի դրախտը, ուր Ենովք եւ Եղիա աղաւնիի անրծութեամբ
վայելչապէս պայծառացած՝ հինէն ի վեր կը գտնուին: Ողորմա՛ծ Տէր,
ողորմէ՛ մեր ննջեցեալներու հոգիներուն:

ՔՀՆ. Քրիստոս Աստուած, ողորմէ՛ հանգուցեալ հոգիներուն, հանգչեցո՛ւր
զանոնք, եւ թողութի՛ւն չնորհէ մեզի՝ մեղաւորներուս յանցանքներուն:

ՄՐԿ. Տիրոջմէ խաղաղութիւն աղերսենք դարձեալ:

Աղաչենք որ մեր փրկիչը՝ Քրիստոս իր արդարներուն դասակից ընէ
հանգուցեալ հոգիները, եւ իր ողորմութեամբը մեզ փրկէ: Ամենակալ Տէր,
մեր Աստուածը, փրկէ՛ մեզ եւ ողորմէ՛ մեզի:

ՔՀՆ. Տէր, ողորմէ՛, Տէր, ողորմէ՛, Տէր, ողորմէ՛:

Քրիստոս, Որդի Աստուածոյ, դուն որ ներողամիտ ես եւ բարեգութ,
արարչական սիրովդ գթա՛ քու հանգուցեալ ծառաներուդ: Յիշէ՛ զանոնք

այն մեծ Օրը, երբ արքայութեամբդ պիտի գաս: Ողորմութեանդ
արժանացուր, քաւէ եւ ներէ՛ անոնց մեղքերը: Զանոնք լոյսովդ
պայծառացուր՝ սուրբերուդ հետ միասին, որոնք քու աջակողմդ պիտի
դասուին. որովհետեւ դո՛ւն ես բոլորին Տէրն ու արարիչը, ողջերու եւ
մեռելներու դատաւորը: Եւ քեզի՛ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու
պատիւր, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:
Քէն. Կ'օրհնենք մեր Տէր Յիսուս Քրիստոսը: Ամէն:

ԴՊԲ. Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի՛ անունդ. թող գայ
արքայութիւնդ. թող կատարուի քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝
այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօր եւս մեզի տուր: Ներէ՛
մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ
նոյնպէս յանցանք գործած են: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ
իյնանք, այլ՝ մեզ չարէն ազատէ՛:

Քէն. Որովհետեւ քո՛ւկդ են միշտ՝ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը:
Ամէն:

ԴՊԲ. Անդադար Տէրը պիտի օրհնաբանեմ, անոր օրհներգութիւնը
շրթներուս վրայ պիտի ըլլայ շարունակ:

Քէն. X Օրհնեա՛լ ըլլաք Սուրբ Հոգիին շնորհքներով: Խաղաղութեամբ
դացէք, եւ Տէրը ձեզի՛ բոլորիդ հետ ըլլայ: Ամէն:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՀՈՒԱՑՄԱՆ ՍԱՂՄՈՍ 26

Ալէլուիա, ալէլուիա:

**Որպէս նշան անմեղութեան՝ պիտի լուամ ձեռքերս, եւ սեղանիդ շուրջ
դառնալով՝ սպասարկեմ քեզի, Տէ՛ր:**

**Արդարութիւն ըրէ ինծի, Տէ՛ր, անմեղ եմ ես. քեզի՝ Տիրոջ վստահեցայ, եւ
պիտի չսասանիմ:**

**Փորձէ զիս, Տէ՛ր, քննէ զիս. քու կրակովդ փորձէ ցանկութիւնները սրտիս
եւ խորհուրդները մտքիս:**

**Որովհետեւ ողորմութիւնդ չհանեցի ես միտքէս, եւ ապրեցայ՝ միշտ քեզի
հաւատարիմ մնալով:**

**Անպէտ մարդոց ընկերութիւն չըրի ես, կեղծաւորին հետ բնա՛ւ գործ
չունեցայ:**

Ատեցի միշտ հաւաքոյթը չարերուն, ամբարիշտին հետ բարեկամ ես չեղայ:

**Որպէս նշան անմեղութեան՝ պիտի լուամ ձեռքերս, եւ սեղանիդ շուրջ
դառնալով՝ սպասարկեմ քեզի, Տէ՛ր,**

**Գոհութեան երգ պիտի երգեմ ես քեզի, եւ քու բոլոր սքանչելի գործերդ
պիտի թուեմ:**

**Տէ՛ր, կը սիրեմ վայելչութիւնը տանը, այս յարկին՝ ուր քու փառքդ կը
բնակի:**

**Ամբարիշտներուն եւ ոճրագործին հետը միասին զիս ալ կորուստի մի
դատապարտեր:**

**Անօրէնութեամբ լի են անոնց գործերը, եւ անոնց ձեռքը՝ կաշառքով
լեցուն:**

Բայց անմեղ եմ ես, ողորմէ՛ ինծի եւ փրկէ՛ զիս, Տէ՛ր:

Անսայթա՛ք պահէ իմ քայլերս միշտ:

Եւ ես խմբուած ժողովուրդիդ հետ՝ քեզ պիտի օրհնաբանեմ:

Փա՛ռք Հօրը եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՄԵՂԵԴԻՆԵՐ

ԾՆՆԴԵԱՆ Եւ ԱՍՏՈՒԱԺԱԾՀԻՆԻՆ

Շուարած եմ մեղքերէս. միայն դուն կրնաս զիս՝ մեղաւորս ազատել, ո՞վ Տիրամայր: Ո՞հ, կուսական քու կենսատու զօրութենէդ լոկ կաթիլ մը ցողէ վրաս:

Նախապէս վայելած իմ պատիւէս արժանի կերպով արտաքսուեցայ, եղո՞ւկ ինծի: Ո՞հ, երկիրը փուշ ու տատասկ բուսցուց ինծի՝ ողորմելիիս:

ԽԱՅԻ ԹՈՆԵՐՈՒՆ

ՄԵՐ ԱՍՏՈՒԾՈՅՆ՝ ՏԻՐՈՂ ՆՉԱՆԸ ՓԱՋԼԵցաւ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷջ, ԹՈՆԱԽԱՄԲՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ:

ԽՆԿԱՐԿՈՒԹԵԱՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

ԾՆՆԴԵԱՆ ԴԿ.

ՄԵԾ Եւ սքանչելի խորհուրդ մը յայտնուեցաւ այսօր. Հովիւներ հրեշտակներու հետ կ'երգեն, աւետիս կու տան աշխարհին: Նոր թագաւոր մը ծնաւ Բեթլեհէմ քա- ղաքին մէջ. փա՛ռք տուէք, ո՞վ մարդիկ, որովհետեւ մեզի համար մարմնացաւ: Ան, զոր ո՛չ երկինքը եւ ոչ ալ երկիրը կրնային բովանդակել, խանձարուրի մէջ փաթթուեցաւ. առանց Հօրմէն բաժնուելու՝ սուրբ քարայրին մէջ բազմեցաւ:

ԶԱՄԻԿԻՆ ԱԶ.

Այսօր երկնաւոր անմահ Փեսան յարութիւն առաւ մեռելներէն. քեզի ուրախ աւետիս, ո՞վ երկրաւոր հարս՝ եկեղեցի. ցնծութեամբ օրհներգէ՛ քու ԱՍՏՈՒԱԺԴ, ո՞վ Միոն:

**Այսօր Լոյսէն ծնած անպատմելի Լոյսը լուսաւորեց զաւակներդ, ո՞վ
Երուսաղէմ· լուսաւորուէ՛, որովհետեւ քու լոյսդ՝ Քրիստոս յարութիւն
առաւ. ցնծութեամբ օրհներգէ՛ քու Աստուածդ, ո՞վ Սիոն:**

**Այսօր անդիտութեան խաւարը փարատեցաւ երեքանձնեայ Լոյսովը,
որովհետեւ մեռելներէն յարութիւն առած Քրիստոսը Աստուծոյ
գիտութեան լո՛յսը բերաւ քեզի. ցնծութեամբ օրհներգէ՛ քու Աստուածդ,
ո՞վ Սիոն:**

Սուրբ Աստուածածինի Վերափոխումին Դջ.

**Այսօր սուրբերը, առաքեալներն ու սուրբ կոյսերը մէկտեղուած, պայծառ
զգեստներով զարդարուած ու ջահեր բռնած, իրենց լապտերները կը
վառէին, եւ միաձայն կ'ըսէին՝ «Օրհնեա՛լ ես, կիներուն մէջ
ամենօրհնեալդ»:**

**Այսօր սուրբ կոյսը գերեզմանի մուտքին դրին, եւ կը սպասէին որ Տէրը
ինք գայ. եւ ահա, երկինքի մէջ տեսան Արարիչը, որ հրեշտակներու
բազմութեամբ կու գար. անոնք միաձայն կ'ըսէին՝ «Օրհնեա՛լ ես,
կիներուն մէջ ամենօրհնեալդ»:**

**Այսօր տեսան սուրբ կոյսը՝ որ օդին մէջ կը թռչէր եւ ամպեղէն կառքով
երկինք կը համբառնար, իմաստուն կոյսերուն հետ երկնային խորանները
մտնելով. եւ միաձայն կ'ը-սէին՝ «Օրհնեա՛լ ես, կիներուն մէջ
ամենօրհնեալդ»:**

Խաչվերացին Աջ.

**Անարատ բազուկներդ խաչին վրայ տարածեցիր, Քրիստոս Աստուած, եւ
զայն մեզի տուիր իրրեւ յաղթութեան նշան. ասով պահպանէ՛ մեր
կեանքը:**

**Քու բազկատարած աշխարհակեցոյց խաչդ, Քրիստոս Աստուած, իրրեւ
զօրութեան գաւազան տուիր մեզի. ասով պահպանէ՛ մեր կեանքը:
Յանցանքի ծառին ճաշակումով մեռածը կեանքի ծառովիդ
կենդանացուցիր. ասով պահպանէ՛ մեր կեանքը:**

ԺԱՄԱՄՈՒՏՆԵՐ

**Ծննդեան Ճրագալոյցին
եւ Աստուածածնի Վերափոխումին**

Ո՞վ Աստուածածին, որ առանց հարսնանալու՝ անսկիզբ Բանը՝
անշօշափելի Աստուածը յղացար եւ ծնար, անբովանդակելին գիրկիդ մէջ
կրելով: Մեզի համար անդադար բարեխօսէ՝ անոր:

Ծննդեան

Աստուածածին կը դաւանի քեզ ուղղափառ եկեղեցին եւ կ'երկրպագէ,
որովհետեւ ան՝ որուն բազմաչեայ քերովքները, հրանիւթ հրեշտակները
եւ վեցթեւեան սերովքները նայիլ խսկ չէին համարձակեր, դուն՝
աղախինդ, անապական արգանդիդ մէջ առանց սերմի կրեցիր զայն՝ Տէրը,
եւ որպէս մարդ ծնար բոլորին Աստուածը, անպատմելի Բանը, որ քեզմէ
մարմնացաւ՝ աշխարհը փրկելու եւ մեզի կեանք պարզեւելու համար:

Զատիկին

Քրիստոս յարութիւն առաւ մեռելներէն, իր մահով մահը նուածեց, եւ իր
յարութեամբ մեզի կեանք պարզեւեց: Անոր փա՛ռք յաւիտեան: Ամէն:

Խաչի տօներուն

Պատուական եւ ամենայաղթ խաչիդ առջեւ խոնարհելով կ'երկրպագենք,
եւ մեր յանցանքներուն թողութիւն կը խնդրենք, որովհետեւ այս խաչով
էր որ մարդկութեան դատապարտութիւնը ջնջեցիր: Հիմա եւս,
աստուածային քու սուրբ նշանիդ սիրոյն՝ երկնային խաղաղութիւնդ
չնորհէ ամբողջ աշխարհին:

Եկեղեցւոյ տօներուն

Խաղաղութիւն չնորհէ քու սուրբ եկեղեցիիդ, ո՞վ Քրիստոս, թշնամիներու
յարձակումներուն դիմաց զայն խաղաղ եւ անսասան պահէ, եւ

ընդհանրական եկեղեցին մէկ հաւատքի մէջ հաստատէ, որովհետեւ դո՛ւն
ես մեր Տէրը եւ Աստուածը, փրկէ' մեզ:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Ծննդեան Աջ.

Սուրբ Աստուածածինը օրհներգութեամբ կը գովաբանենք:
Աւետարեր հրեշտակը կ'աւետէր սուրբ Կոյսէն ծնելիք Փրկիչը:

Կ'ըսէր. «Ուրախացի՛ր, չնորհալի՛ կոյս, որովհետեւ տէրերու Տէրը քեզի
հետ է»:

Յարութեան Աջ.

Միասնաբար երգով բարերանենք Քրիստոսը, փառքի Թագաւորը, որ մեզի
համար սուրբ Կոյսէն մարմնացաւ եւ խաչը յանձն առաւ:

Միասնաբար երգով բարերանենք ան՝ որ յանձն առաւ երեք օր թաղումիլ,
եւ իշխանաբար յարութիւն առաւ մեռելներէն:

Միասնաբար երգով բարերանենք ան՝ որ իր զօրութեամբ մեռելներու
աշխարհին դռները խորտակեց եւ մեծ վայելչութեամբ զարդարեց իր
եկեղեցին:

Յարութեան Ակ.

Աստուած հեթանոս ազգերուն վրայ թագաւորեց, եւ լուսազարդեց ու
պայծառացուց իր եկեղեցին. ժողովուրդնե՛ր, բարերանեցէ՛ք Քրիստոսը:
Տէրը իր զօրութիւնը ցոյց տը-ւաւ, որովհետեւ խաչին վրայ իր սուրբ
մահով մահուան խայթոցը ջնջեց. ժողովուրդնե՛ր, բարերանեցէ՛ք
Քրիստոսը:

Աստուած յարութիւն առաւ, եւ ամբողջ տիեզերքը նորափետուր
զարդարուեցաւ, եւ Աստուծոյ զաւակները կենարարին մարմինով եւ
արիւնով հաղորդուեցան. ժողովուրդնե՛ր, բարերանեցէ՛ք Քրիստոսը:

Յարութեան ԲԶ.

Օրհներգենք յաւիտենական Թագաւորը, որ Կոյսէն մարմնացաւ եւ աշխարհը անսասանելի հաւատքի վրայ հաստատեց: **Փա՛ռք իրեն, այժմ եւ յաւիտեան:**

Ինք՝ Բան Աստուածը կամաւորաբար յանձն առաւ խաչի վրայ մեռնիլ, եւ իր սուրբ արիւնը թափեց տիեզերքի վրկութեան համար: **Փա՛ռք իրեն, այժմ եւ յաւիտեան:**

Աստուածապէս յարութիւն առնելով նորափոր ժայռէն՝ իր սուրբ եկեղեցին լուսազարդեց, որպէսզի փառաւորուի եւ գովուի իր անունը: **Փա՛ռք իրեն, այժմ եւ յաւիտեան:**

Յարութեան ԲԿ.

Բարձունքներուն մէջ օրհներգութիւն Կոյսէն ծնած մեր Թագաւորին: **Ալէլուիա՛, ալէլուիա՛:**

Բարձունքներուն մէջ օրհներգութիւն անսասանելի եւ հաստատուն մեր յոյսին: **Ալէլուիա՛, ալէլուիա՛:**

Բարձունքներուն մէջ օրհներգութիւն անբաժանելի եւ միասնական Սուրբ Երրորդութեան: **Ալէլուիա՛, ալէլուիա՛:**

Յարութեան ԳԶ.

Օրհներգութեամբ բարերանեցէք Քրիստոս թագաւորը, ո՛վ բոլոր աշխարհ:

Երգով գոհութիւն մատուցէք Երկինքն ու Երկիրը Արարողին, ո՛վ բոլոր աշխարհ:

Յաւիտեան պատիւ եւ Երկրագութիւն մատուցանենք Երրորդութեան, մէկ Աստուածութեան: **Ամէն:**

Յարութեան ԳԿ.

Ո՛վ Քրիստոս, քու աստուածութեանդ լոյսով լուսաւորեցիր սուրբ եկեղեցին. զայն անշա՛րժ պահէ յաւիտեան:

Այսօր Երուսաղէմը հաւատա- ցեալներու բազմութեամբ եկեղեցւոյ
նաւակատիքը կը տօնէ. զայն անշա՛րժ պահէ յաւիտեան:

Ահա Նոր Սիոնը հաւատքի դռները բացաւ, որպէսզի իր առագաստը
ընդունի քեզ՝ անմահ Փեսադ, որ մարմինդ եւ արիւնդ կը բաշխես. զայն
անշա՛րժ պահէ յաւիտեան:

Յարութեան Դջ.

Քրիստոս Թագաւոր, Հօրը եւ Հոգիին էակիցը, որ մեզի համար սուրբ
Կոյսէն մարմնացար. փա՛ռք քեզի, Քրիստոս, փառքի Թագաւոր:
Քու կամաւոր մահուամբդ մահը մեռցուցիր, եւ անապական
յարութեամբդ աշխարհը նորոգեցիր. փա՛ռք քեզի, Քրիստոս, փառքի
Թագաւոր:

Կենդանարար արիւնովդ սուրբ եկեղեցին լուսաւորեցիր, հրեշտակներուն
հետ կ'օրհներգենք քեզ, ըսելով. փա՛ռք քեզի, Քրիստոս, փառքի
Թագաւոր:

Յարութեան Դկ.

Քու անսահման յաղթող զօրութեամբդ երկինքի եւ երկրի թագաւորն ես,
Քրիստոս Աստուած. կ'օրհնարանենք քեզ:

Դուն, Հօրը փառակիցը, որ անմահ-ներուն կողմէ կ'օրհնարանուիս,
ինքզինքդ խոնարհեցնելով մարմին առիր, փառքի՛ թագաւոր.

կ'օրհնարանենք քեզ:

Դուն՝ Հզօրդ, մահը նուաճեցիր, եւ յարութիւն առնելով՝ սուրբ եկեղեցին
լուսաւորեցիր, անմահ էութիւն. կ'օրհնարանենք քեզ:

Աստուածածինի Վերափոխումին Բջ.

Անթառամ ծաղիկն ես դուն, դատապարտութենէ զերծ շառաւիղը Եւայի,
որ Յեսսէի արմատին վրայ բուսար: ՔԵ՛զ էր որ Եսայի կանուխէն
յայտարարեց որպէս ընդունարանը Սուրբ Հոգիին եօթնատեսակ
շնորհքներուն, ո՛վ Աստուածածին կոյս, կը գովարանենք քեզ:

Համեղաճաշակ պտուղին բանաւոր որթատունկը եղար, եւ մեզի տուիր
անսպառելի ողկոյզը, որպէսզի ուրախանան բոլոր անոնք՝ որոնք

գիտութեան ծառին ճաշակումով տրտմած էին. ո՞վ անարատ Արբուհի,
բոլորս կը գովաբանենք քեզ:
Մարմնովդ, որով անարատ կեանք մը վարեցիր, եւ որ այսօր
առաքեալներուն կողմէ ամփոփուեցաւ ու պատանքուեցաւ, երկնային
հրահանգով փոխադրուեցար քու որդիիդ եւ մեր Աստուծոյն
արքայութիւնը. ո՞վ բարեխօս քեզ դաւանողներուս, կը գովաբանենք քեզ:

Խաչի տօնին ԳԿ.

Յաղթական նոր օրհներգութիւն երգենք միշտ, հաւատացեա'լ ժողովուրդ,
բարձունքներուն մէջ նստող թագաւորին՝ Քրիստոսի:
Անոր՝ որ եկաւ լուսաւորելու իր ընտրած սուրբ եկեղեցին, զոր սուրբ
խաչովը պսակեց. երգով փառաւորենք զայն:
Այսօր մենք եւս սուրբ խաչին նաւակատիքը կը տօնենք եւ յաւէտ փառք ու
պատիւ կ'ընծայենք **Փրկիչին:**

ՃԱՇՈՒ ԱԼԷԼՈՒՔՆԵՐ

Ծննդեան

Ալէլուիա, ալէլուիա:
Յաւիտեաններէն առաջ Հօրմէն ծը- նած Որդին, օծեալ Տէրը, այսօր
Դաւիթի ծննդավայր քաղաքին մէջ ծնաւ:

ՄԵծ Պահքին (Մաղմոս 100)

Ալէլուիա, ալէլուիա:
Տիրոջ աղաղակեցէք, ամբողջ աշխարհ։ Ուրախութեամբ ծառայեցէք
Տիրոջ։
Ցնծութեամբ եկէք անոր ներկայութեան։ Գիտցէք, թէ Տէրը ի'նքն է
Աստուծը։
Ա'ն մեզ ստեղծեց, եւ մենք անորն ենք. իր ժողովուրդն ենք, այն հօտը՝ որ
ի'նք կ'արածէ։
Գոհարանութեամբ մտէք անոր տաճարը, օրհներգութեա'մը մտէք անոր
ըրջափակէն ներս։

Շնորհակալութիւն յայտնեցէք իրեն, օրհներգեցէ՛ք իր անունը:
Բարի է Տէրը, անոր սէրը յաւերժական է:
Եւ բոլոր սերունդներուն կը ցուցաբերէ իր հաւատարմութիւնը:
Զատիկի Յինանց (Սղ. 147)

Ալէլուիա, ալէլուիա:
Գովաբանէ՛ Տէրը, ո՛վ Երուսաղէմ:

Օրհնութիւն երգէ քու Աստուծոյդ, ո՛վ Սիոն:

Աստուած ի՛նքն է որ ամրափակ կը պահէ դարպասներդ, եւ կ'օրհնէ քու
մէջդ բնակող զաւակներդ:

Սահմաններդ խաղաղ կը պահէ, ընտիր ցորենով կը կերակրէ քեզ:

Հրաման կ'արձակէ երկրին, եւ իր պատգամը անմիջապէս տեղ կը հասնի:
Զիւն կը պարզեւէ բուրդի պէս, եղեամ կը ցանէ մոխիրի պէս:
Կարկուտ կը թափէ պատառներու պէս. անոր պատճառած ցուրտին ո՞վ
կրնայ դիմանալ:
Դարձեալ հրամանով մը կը հալեցնէ սառոցները, փչել կու տայ հովերուն,
հոսիլ կու տայ ջուրերուն:

Իր խօսքը կը յայտնէ Յակոբի սերունդներուն, իր կանոններն ու
օրէնքները կը յայտնէ իսրայէլի որդիներուն:
Ուրիշ ոեւէ ազգի այսպիսի բան չըրաւ Տէրը:
Ուրիշ ոեւէ ազգի չյայտնեց իր օրէնքները:

Աստուածածինի Վերափոխումին

Ալէլուիա, ալէլուիա:
Սուրբ Հոգին քեզի պիտի զայ, եւ Բարձրեալին զօրութիւնը քու վրադ
պիտի հանգչի:
Խաչի եւ Եկեղեցւոյ տօներուն

Ալէլուիա, ալէլուիա:

**Քու լոյսդ ծագեցուցիր մեր վրայ, եւ մեր սրտերուն ուրախութիւն
պարզեւեցիր:**

Կամ

**Ալէլուիա, ալէլուիա:
Ի՞նչ սիրելի է տաճարդ, ամենակալ Տէր, ամբողջ հոգիով կը ցանկամ եւ կը
փափաքիմ գաւիթներուդ մէջ բնակիլ:**

ՍՐԲԱՍԱՅՈՒԹԻՒՆԵՐ

Ծննդեան, Վարդապառին եւ Աստուածածինին

**Հրեշտակներու եւ երկնային զօրքերու բազմութիւնները, որոնք միածին
թագաւորին հետ երկինքէն վար իջան,
X կ'երգէին ու կ'ըսէին. «Աստուծոյ Որդին է սա»: Մենք ալ բոլորս ըսենք.-
Ուրախացէ՛ք, երկինքնե՛ր, թող ցնծան աշխարհի հիմերը, որովհետեւ
յաւիտենական Աստուածը երկրի վրայ յայտնուեցաւ եւ մարդոց հետ
ապրեցաւ, որպէսզի մեզ փրկէ:**

**Զատիկին, Յինանց,
Համբարձման եւ Խաչի տօներուն**

**Ո՞վ կայ մեր Տէր Աստուծոյն նման, որ մեզի համար խաչուեցաւ,
թաղուեցաւ,
X եւ յարութիւն առաւ, աշխարհի մէջ հաստատուեցաւ, եւ փառքով համ-
բարձաւ: Եկէ՛ք, ժողովուրդնե՛ր, հրեշտակներուն հետ փառարանութիւն
երգենք իրեն, ըսելով.- Սո՛ւրբ, սո՛ւրբ ես, Տէ՛ր, մեր Աստուածը:**

ՇԱՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Գ.Զ.

Ուրախացի՛ր, սուրբ եկեղեցի, որովհետեւ Քրիստոս՝ երկնաւոր արքան,
այսօր իր խաչով պսակեց քեզ եւ իր սքանչելի փառքով զարդարեց
պարիսպներդ:

Մեծապէ՛ս ուրախացիր, Սիոնի՛ դուստր, որովհետեւ այսօր երկիրը երկինք
եղաւ վերստին նորոգուելովդ, եւ երկնաւոր թագաւորը հաճեցաւ քու
մէջդ բնակիլ:

Երկնաւոր զօրքերու գունդերուն հետ վերացած՝ այսօր անդադար քեզ
փառաբանելով կ'ուրախանանք. անքըն-նելի քու խորհուրդովդ
ուրախացի՛ր, անարատ հարս:

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՇԱՐԱԿԱՆ ԱԿ.

Անոնք տնօրինաբար զարդարեցին անստեղծ Աստուծոյ իմաստութիւնը՝
կենդանի գիրքը երկրի վրայ հաստատելով, հովուելու համար նոր
իսրայէլի հօտը, քաղցրահունչ երգով զԱստուած օրհնաբանենք:
Անոնք երկրաւոր փառքի ճոխութիւնը խաւար համարեցին, անմահ
փեսային յոյսին ապաւինելով անպատմելի Բանին արժանի եղան.
քաղցրահունչ երգով զԱստուած օրհնաբանենք:

Անոնք Հօր՝ անստեղծ է-ին իմաստութեան զօրութեամբ ամրացուցին
սուրբ Գրիգորի աթոռը՝ Սուրբ Գիրքերուն թարգմանութեամբ.
քաղցրահունչ երգով զԱստուած օրհնաբանենք:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՇԱՐԱԿԱՆ ԴԿ.

Նորահրաշ կերպով թագաղրուած եւ առաքինիներու զօրագլուխ, ո՛վ
Վարդան, Սուրբ Հոգիին զէնքով արիաբար զինուեցար մահուան դէմ.
դո՛ւն, քաջ նահատակ, թշնամին վանեցիր եւ վարդագոյն արիւնովդ
եկեղեցին պսակեցիր:

Խոհական իմաստութեամբ անձառապէս խոհեմացած Խորէնը՝ իմաստուն
եւ բարի անունով ճանչցուած, երկնաւոր թագաւորին զէնքով պատերազմ

մղեց եւ յաղթեց, անիկա խաչեալին վկայ եղաւ եւ արեան հեղումով պսակուեցաւ:

Աստուածային լոյսով լեցուած արիացած քաջ Արտակը, աղբերացող արիւնին բոսոր կարմրութեամբ թաթաւուն՝ փրկական բաժակը ըմպեց եւ իր արիւնով մկրտուեցաւ, հրեշտակներուն դասակցեցաւ՝ երգելու համար Երրորդութեան փառքը:

ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՇԱՐԱԿԱՆ ԴԿ.

Ո՞վ արդարութեան արեգակ, Հայաստանի մէջ ծագելով սուրբերու արիւնին հեղումով պայծառացուցիր սուրբ Եկեղեցին. անոնց աղօթքով խնայէ' մեզի, բարիքներու պարզեւատու, եւ ողորմէ' քու արարածներուդ:
Պանծալի սուրբ զաւակներուն օգնութեամբ արթուն հովիւները, Սուրբ Հոգիին հուրով մարեցին կրակապաշտ պարսիկներուն կրակը. անոնց աղօթքով խնայէ' մեզի, բարիքներու պարզեւատու, եւ ողորմէ' քու արարածներուդ:

Պարթեւ տեսանողը աստուածային նախազդեցութեամբ սուրբ Գրիգորի հաւատքի որդիները պսակագարդուած տեսաւ. անոնց աղօթքով խնայէ' մեզի, բարիքներու պարզեւատու, եւ ողորմէ' քու արարածներուդ: